

սուլթանական գերիշխանութեան:

Այսպիսով, հայերն ու քրիւղերը Սուլթան Սէլիմի տիրապետութենէն երեք քառորդ դար առաջ պետական կամ իշխանապետական գերացնութիւն մը ունէին եւ մտահոգուած էին իրենց գոյութիւնը պահպանելու արտաքին վրտանդներէն:

Պատմութեան համար խիստ չահեկան իրողութիւն մըն է այն նիզակցութիւնը կամ դաշնակցութիւնը, որ կազմուեցաւ 1459 թուականին արեւելեան Անատոլիոյ եւ Կովկասի քրիստոնեայ եւ մահմետական իշխաններու միջեւ: Այդ նիզակցութեան մէջ կը մտնէին Տիգրանակերտի տէրը, Ուզուն Հասան բէկ, Մասնոյ հայ իշխանները, Տրապիզոնի Կալոֆովհանէն թագաւորի յաջորդ Դաւիթ կայսրը, Վրաստանի Գէորգ Բագրատեան իշխանը, Գուրիոյ Մամիա գաւառակալ կոմսը, Մինգրիլիոյ Բենդեան իշխանը, Ավդասիոյ Դարիա գուքսը, Փոքր Հայքէն Բերտի պէկ, Սինոպի տէրը՝ Իսմայիլ պէկ եւ Կարամանի սուլթանը:

Պրոֆ. Վ. Տոմաշէկ այս նիզակցութեան մասին խօսելով կուտայ հետեւեալ մանրամասնութիւնը, որ նշանակալից է հայերու եւ քրիւղերու յարաբերութեան տեսակէտէն. —

«Օսմանցոյ՝ սաստիկ աճած ու զարգացած զօրութիւնը (Մուհամմէտ Բ. սուլթանի ժամանակները՝ Կ. Ս.) ի չափու բռնելու եւ խորտակելու համար՝ Նիկողայոս Ե. խաչակրութիւն մը յաջողցնելու աշխատեցաւ: Իւր յաջորդը՝ Կալիքստոս՝ կրտսերագոյն եղբարց կարգէն զԼուսովիկոս Բոլոնիացին Փոքր Ասիա զրկեց, որպէսզի այս ծրագրին շահի քրիստոնեաներն ու մահմետական այն իշխանները, որոնց անկախութեան վտանգ կը սպառնար: Խաչակրութեան առաջնորդը պիտի ըլլար Բուրդունդեայ Փիլիպպոս գուքսը: Ս. Քահանայապետին պատուիրակը Լեւանդեան իշխաններու մէջ երկնազոյն նիզակցութիւն մը յաջողցուց, զէթ թուղթի վրայ: Այս իշխանները իրենց կողմանէ բանակ խոստացան... Ասոնց զօրութեան մասին տեղեկութիւններ կան դէպին գրուած թղթերուն մէջ, զորոնք ննչէս Սիլուրոս կամ Պիոս Բ. Քահանայապետը՝ Կալիքստոսի յաջորդը՝ անոր թղթոց ժողովածոյին մէջ անցուցած է. Դաւիթ կայսեր

թուղթը Տրապիզոնէն (թղթ. 377, 22 Ապրիլի 1459), Երկրորդն է Գորգորա (վրացերէն Կուարկուարէ) Աթաբէգին թուղթը՝ Ալեքսիսայէն՝ (թղթ. 378), Երրորդն է Աղէքսանդրի որդւոյն՝ Վրաստանի Բագրատեան իշխանի թուղթը (թղթ. 398, 5 Նոյեմբեր, 1459)... Այս վաւերագրերը մեր հետազոտութեան համար այնու կարեւորութիւն ունին, որ ասոնց ձեռքովն առաջին անգամ արեւմուտք Սասուն անունը որոշ կը յիշուի: Ոչ թէ միայն (թղթ. 377) «Գեթեցիք եւ Արանցիք Գէորգի դրօշին տակ զինուորել կը խոստանան» կ'ըսուի, այլ նաեւ (թղթ. 379) «յիշեալ նիզակցութեան մէջ կան ուրիշ ժողովուրդներ ալ՝ Գեթեարացիք եւ Սասունցիք», որ կէս անկախ վիճակի մէջ Հասան պէկի Երկրին մէջ կ'ապրէին: Լուկարիի (Annali di Rausa, Վենետիկ, 1605, էջ 110) շատ արժանահաւատ տեղեկութեան համաձայն այն քրիստոնեայ ցեղերու կողմանէ խօսող էին Հայք «Հեթում ու Ռուբէն Գիթիարացոց եւ Սասունցոց պատգամաւորները»: («Haitone e Rubino, ambascidore delle repubbliche de' Githiarni e Sassoni»): (Պրոֆ. Վ. Տոմաշէկ, «Սասուն», էջ 56-57):

Այդ նիզակցութիւնը կազմող պատուիրակը իր հետ կ'առնէ իշխաններու պատգամաւորները, որոնց մէջն էին Հեթում եւ Ռուբէն սասունցիներու պատգամաւորները, Տիգրանակերտէն Մէհմէթ Քիւրդը, Տիգիսէն՝ Նիկողայոս Բայլը, եւ ուրիշներ: Ասոնք Պոնտոսի վրայով կ'անցնին Հունդարիա, Վիեննա եւ Վենետիկ: Այս խաչակրութեան միայն վենետիկցիք կարեւորութիւն տուին եւ հրազէն զրկեցին Տրապիզոնի համար: Սակայն, այս նիզակցութիւնը լուծուեցաւ, առանց օսմանեան կայսեր վրայ յարձակում գործելու:

Այս նիզակցութեան միտքը թէեւ ներշնչուած էր Արեւմուտքի կողմէ՝ օսմանեան յառաջխաղացութիւնը կասեցնելու համար, միւս կողմէ, սակայն, կը բխէր նիզակցողներու նման դաշնակցութիւն մը, եթէ սերտ հիմերու վրայ գրուած ըլլար, կոչուած էր ճակատագրական նշանակութիւն ունենալ: Բայց սուլթան Մուհամմէտ Բ. ի յաղթանակները զէպի Արեւմուտք, մէկ կողմէ սարսափահար կ'ընէին իր